ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

օգոստոսի 2022 թվականի № -Ա
ք. Երևան

«ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՀԵԼԻՈՍ-2» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2020 թվականի ապրիլի 1-ի №106Ա որոշմամբ «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Արագածոտն համայնքի վարչական տարածքում «Հելիոս-2» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0674 լիցենզիան (այսուհետ՝ Լիցենզիա), ինչի համար ի թիվս այլ փաստաթղթերի հիմք են հանդիսացել 2019 թվականի դեկտեմբերի 3-ի էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-200-110/1375-Հ նախնական տեխնիկական պայմանը և Կայանի կառուցման (շահագործման և սպասարկման) համար անհրաժեշտ 9,93155 հա հողամասի նկատմամբ իրավունքի պետական գրանցման №18022020-02-0022 վկայականը,
2) Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 5-ին ներկայացրել է արտադրության փուլ անցնելու նպատակով Լիցենզիայում փոփոխություններ կատարելու մասին դիմում և սակագնի սահմանման (վերանայման) հայտ՝ ի թիվս այլ փաստաթղթերի ներկայացնելով նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2020 թվականի մայիսի 20-ի էլեկտրաէներգետիկական համակարգին

միացման №ՏՊ-200-110/1375-Հ տեխնիկական պայմանը, համաձայն որի՝ փոփոխվել են բաշխման ցանցին Կայանի միացման լարման պայմանները՝ նախկին 110 կՎ-ի փոխարեն դառնալով 10 կՎ: Ընկերությունը 2022 թվականի օգոստոսի 10-ի գրությամբ ներկայացրել է նաև Կայանի շահագործման և սպասարկման համար անհրաժեշտ 10.13155 հա հողամասի և նրանում կառուցված Կայանի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքի պետական գրանցման №08082022-02-0017 վկայականը,

3) Հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգի 11-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը հայտի ստուգման արդյունքների մասին գրավոր տեղեկացնում է հայտատուին՝ հայտը մուտքագրվելու օրվանից ոչ ուշ, քան 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հայտի ստուգման դրական արդյունքի դեպքում այն ընդունվում է ուսումնասիրության: Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտն ընդունվել է ուսումնասիրության, որի մասին Ընկերությունը տեղեկացվել է Հանձնաժողովի 2022 թվականի օգոստոսի 17-ի №ԱՍ/34.3-Մ2-7/2814-2022 գրությամբ,

4) 2020 թվականի հոկտեմբերի 6-ից գործող խմբագրությամբ Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի (այսուհետ՝ Մեթոդիկա) 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ Մեթոդիկայի 1-ին կետի 7-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նշված և էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայով ամրագրված հաշվարկային հզորությամբ կառուցված կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը առաջին անգամ մինչև 2022 թվականի հոկտեմբերի 31-ը ներառյալ ժամանակահատվածում սահմանվելու պարագայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած՝ փաստաթղթերով ներկայացված կայանի կառուցման համար անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման

կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխման (ընդլայնման) կամ էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխման դեպքերում՝ սահմանվում է Մեթոդիկայի 3-րդ կետի 2-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն համապատասխան ժամանակահատվածի համար ձևավորված մեծության և 0.9 գործակցի արտադրյալին հավասար,

5) Ընկերության ներկայացրած՝ Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության արդյունքում, Հանձնաժողովի գնահատմամբ, սակագինը ենթակա է սահմանման ներկայում գործող Մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերության համաձայն, քանի որ տեղի է ունեցել Լիցենզիայի տրամադրման համար հիմք հանդիսացած փաստաթղթերով ներկայացված՝ անհրաժեշտ հողատարածքի (բացառությամբ կայանը էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման համար անհրաժեշտ օդային գծերի, հենասյուների, հաշվառման համակարգի, բաշխման ցանցին միացման կետում այլ օժանդակ սարքավորումների տեղադրման համար անհրաժեշտ հողատարածքի) փոփոխում (ընդլայնում) և էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխություն, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետը, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88-Ն, 2022 թվականի մայիսի 25-ի №217-Ն որոշումները՝ Հանձնաժողովը **որոշում է**.

1. «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Հելիոս-2» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 22.547 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի:
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից յոթնօրյա ժամկետում կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան կամ երկամսյա ժամկետում՝ Հանձնաժողով, և բողոքարկումը չի կասեցնում որոշման գործողությունը կամ կատարումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի օգոստոսի -ից և գործում է մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
օգոստոսի 2022թ.